

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Ե՞րբ է անցում կատարվել նեպից հրաժարվելու և կուլակությունը որպես դասակարգ վերացնելու քաղաքականությանը.

- 1) 1930 թ.
- 2) 1929 թ.
- 3) 1928 թ.
- 4) 1927 թ.

2

Ե՞րբ է Տրդատ Արշակունին մենամարտում հաղթել գոթերի իշխանին.

- 1) 296 թ.
- 2) 279 թ.
- 3) 276 թ.
- 4) 267 թ.

3

Պոտոլամի կոնֆերանսի ո՞ր նիստերում քննարկվեց հայկական տարածքների հարցը.

- 1) 1945 թ. հուլիսի 29–30–ի
- 2) 1945 թ. օգոստոսի 1–2–ի
- 3) 1945 թ. հուլիսի 16–17–ի
- 4) 1945 թ. հուլիսի 22–23–ի

4

Ե՞րբ է ԱՄՆ–ի կառավարությունն իր բողոքը հայտնել հայերի նկատմամբ իրագործվող բռնությունների դեմ.

- 1) 1915 թ. ապրիլին
- 2) 1915 թ. հունիսին
- 3) 1916 թ. մայիսին
- 4) 1916 թ. փետրվարին

5

Ե՞րբ է առաջացել առաջին համահայկական միասնական պետությունը.

- 1) Ք. ա. II հազարամյակի առաջին կեսին
- 2) Ք. ա. I հազարամյակի առաջին կեսին
- 3) Ք. ա. II հազարամյակի երկրորդ կեսին
- 4) Ք. ա. I հազարամյակի երկրորդ կեսին

6

Ե՞րբ է կառուցվել Արտաշատ մայրաքաղաքը.

- 1) Ք. ա. մոտ 175 թ.
- 2) Ք. ա. մոտ 160 թ.
- 3) Ք. ա. մոտ 165 թ.
- 4) Ք. ա. մոտ 185 թ.

7

Ե՞րբ է տեղի ունեցել Շամբորի ճակատամարտը.

- 1) 1826 թ. սեպտեմբերի 3-ին
- 2) 1826 թ. սեպտեմբերի 13-ին
- 3) 1827 թ. հոկտեմբերի 13-ին
- 4) 1827 թ. օգոստոսի 17-ին

8

Ե՞րբ է Էջմիածին վերադարձել Ստեփաննոս Սալմաստեցու գլխավորած պատվիրակությունը.

- 1) 1551 թ.
- 2) 1547 թ.
- 3) 1562 թ.
- 4) 1549 թ.

9

Ո՞րն էր Խաչի աստծո «սրբազան քաղաքը».

- 1) Տուշպա-Վանը
- 2) Թեյշեբախին
- 3) Արդինի-Մուսասիրը
- 4) Մենուախինիլին

10

Ո՞ր գավառում էր գտնվում Դոդոս գյուղը.

- 1) Արագածոտն
- 2) Շիրակ
- 3) Վանանդ
- 4) Բագրևանդ

11

Ո՞վ է սպանել Մ. Նակաշիձեին.

- 1) Դրոն
- 2) Համագասպը
- 3) Մուրադը
- 4) Սմբատը

12

Ո՞վ էր հեթանոս հայերի հյուրընկալության աստվածը.

- 1) Վանատուրը
- 2) Արեգ-Միհրը
- 3) Վահագնը
- 4) Տիրը

13 Որտե՞ղ է գտնվել Ավետարանոցի տղնախր.

- 1) Շիրվանում
- 2) Գեղարքունիքում
- 3) Սյունիքում
- 4) Արցախում

14 Որքա՞ն էր հայկական բանակի մարտական ուժը 1920 թ. թուրք–հայկական պատերազմի ժամանակ.

- 1) 20000
- 2) 15000
- 3) 25000
- 4) 40000

15 Որքա՞ն էր Արշակունյաց Հայաստանի կանոնավոր բանակի թվակազմը.

- 1) 160–180 հազար
- 2) 60–70 հազար
- 3) 130–150 հազար
- 4) 100–120 հազար

16 Ո՞ւմ ղեկավարությամբ է Լենինականում (Գյումրի) հիմնվել պետական թատրոնը.

- 1) Լևոն Քալանթարյանի
- 2) Վարդան Աճեմյանի
- 3) Արմեն Գուլակյանի
- 4) Հրաչյա Ղափլանյանի

17 Ո՞ւմ են պատկանում հետևյալ խոսքերը.

«Այժմ, երբ տեսնում ես ինձ կարճահասակ, մեծությանս չափը չես հասկանում, որովհետև մինչ այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես»:

- 1) Վասակ Մամիկոնյանին
- 2) Մուշեղ Մամիկոնյանին
- 3) Վաչե Մամիկոնյանին
- 4) Մանվել Մամիկոնյանին

18 Հայոց ո՞ր արքան է ասել հետևյալ խոսքերը.

«Ես ազատության էի ձգտում, քանզի լավ էի համարում, որ ինքս ազատ լինեմ և որդիներիս ազատություն թողնեմ»:

- 1) Տիգրան Երվանդյանը
- 2) Երվանդ Սակավակյացը
- 3) Պարույրը
- 4) Վահագնը

19

Թուրքիայում կարճ ժամանակով իշխանության եկած և հայկական բարենորոգումների ծրագրով հանդես եկած կուսակցությունը կոչվում էր՝

- 1) «Միություն և համաձայնություն»
- 2) «Արդարություն և զարգացում»
- 3) «Ազատություն և համաձայնություն»
- 4) «Ազատություն և հավասարություն»

20

Ի՞նչ էր կոչվում Հայաստանի արևմտյան մասի կառավարիչն Աքեմենյան տիրապետության օրոք.

- 1) հյուպարքոս
- 2) ստրատեգոս
- 3) սատրապ
- 4) մարզպան

21

Թվարկվածներից որո՞նք են ճիշտ արտահայտում պատմական իրադարձությունների պատճառները.

- ա. Խորհրդային Ադրբեջանի՝ հայկական տարածքները նվաճելու ծրագրին Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը պայմանավորված էր քեմալաբոլշևիկյան մերձեցմամբ:
- բ. 1940–ական թթ. սփյուռքահայության շրջանում ԽՍՀՄ հեղինակության բարձրացման պատճառը Խորհրդային Հայաստանում Հայ դատի հանձնախմբերի ստեղծումն էր:
- գ. Փետրվարյան ապստամբությունը պայմանավորված էր Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեության արգելմամբ:
- դ. 1990–ական թթ. հայ–թուրքական հարաբերությունների կարգավորման ձախողման պատճառը Թուրքիայի՝ Հայաստանին նախապայմաններ ներկայացնելն էր՝ հատկապես Ղարաբաղյան խնդրի հետ կապված:
- ե. Մայիսյան ապստամբության պատճառը Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեության արգելումն էր:
- զ. Հայաստանում մենատնտես գյուղացիության թվաքանակի աճը պայմանավորված էր գյուղատնտեսության կոլեկտիվացմամբ:

- 1) դ, ե
- 2) ա, դ
- 3) բ, գ
- 4) գ, զ

22

Ինչո՞ւ կնքվեց Մծբինի 40–ամյա խաղաղության պայմանագիրը.

- 1) Հռոմի դաշնակից Հայաստանը նրան ստիպեց գնալ զիջումների
- 2) քանի որ պարտված Պարսկաստանը հաշտություն էր խնդրել
- 3) քանի որ պարտված հռոմեացիները չցանկացան շարունակել պատերազմը
- 4) քանի որ Պարսկաստանի դաշնակից Հայաստանը հանդես եկավ միջնորդությամբ

23

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. գերի վերցված պարսից մոզերի մահապատիժը Ջարեհավանում
- բ. հայ նախարարների՝ քրիստոնեության առերես ուրացումը Տիզբոնում
- գ. Անգղի եկեղեցին քանդելու փորձը պարսից զորքի և մոզերի կողմից
- դ. հայ նախարարների ժամանումը Տիզբոն՝ Հազկերտ II-ի արքունիք
- ե. Աշուշա բդեշխին և Վասակ Սյունու զավակներին պատանդ թողնելը Տիզբոնում

- 1) բ, դ, գ, ե, ա
- 2) բ, դ, ե, գ, ա
- 3) դ, բ, ե, ա, գ
- 4) դ, բ, ե, գ, ա

24

Պատմական գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության.

- ա. Դավիթ բեկ
- բ. Հովսեփ Էմին
- գ. Վ. Բեհբուրով
- դ. Պ. Ցիցիանով
- ե. Իսրայել Օրի
- զ. մահտեսի Շահմուրատ

- 1) գ, ա, գ, դ, բ, ե
- 2) գ, ե, ա, դ, բ, գ
- 3) գ, ե, ա, բ, դ, գ
- 4) ե, բ, դ, գ, ա, գ

25

Բարունիների անունները համապատասխանեցնել ուսումնագիտական կենտրոններին.

- 1) Նարեկավանք
- 2) Անիի վարդապետարան
- 3) Նոր Գետիկ
- 4) Գլաձոր
- 5) Տաթև

- ա. Հովհան Որոտնեցի
- բ. Ներսես Լամբրոնացի
- գ. Մխիթար Գոշ
- դ. Անանիա Նարեկացի
- ե. Եսայի Նչեցի
- զ. Հովհաննես Իմաստասեր

- 1) 1-դ, 2-գ, 3-գ, 4-ե, 5-ա
- 2) 1-դ, 2-ե, 3-բ, 4-գ, 5-ա
- 3) 1-բ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-գ
- 4) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-գ

26

Գործիչների անունները համապատասխանեցնել քաղաքական կազմակերպությունների անվանումներին.

- | | |
|-------------------------------|--------------------------|
| 1) «Միություն ի փրկություն» | ա. Կարապետ Թուր-Սարգսյան |
| 2) «Հայրենասերների միություն» | բ. Արսեն Կրիստյան |
| 3) «Բարենպատակ ընկերություն» | գ. Խաչատուր Կերեքցյան |
| 4) «Պաշտպան հայրենյաց» | դ. Ներսես Աբեյան |
| | ե. Հակոբ Կալոյան |
-
- | |
|-----------------------|
| 1) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ |
| 2) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ |
| 3) 1-ե, 2-դ, 3-բ, 4-գ |
| 4) 1-ե, 2-դ, 3-բ, 4-ա |

27

Ադրբեջանի հեղկոմը 1920 թ. վերջին արված իր հայտարարությամբ Խորհրդային Հայաստանի հանրապետության մաս էր ճանաչում՝

- 1) Լեոնային Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը
- 2) Նախիջևանը, Ղազախը և Լեոնային Ղարաբաղը
- 3) Լեոնային Ղարաբաղը, Ղազախը և Ջանգեզուրը
- 4) Ջանգեզուրը, Ղազախը և Նախիջևանը

28

Ե՞րբ է Սսում հրավիրվել եկեղեցական ժողով, որը չեղյալ է հայտարարել Սսի և Ադանայի նախորդ ժողովների որոշումները.

- 1) 1360 թ.
- 2) 1361 թ.
- 3) 1365 թ.
- 4) 1369 թ.

29

Ե՞րբ է Հայոց կաթողիկոսական աթոռը հաստատվել Արգինայում.

- 1) 961 թ.
- 2) 908 թ.
- 3) 948 թ.
- 4) 928 թ.

30

Ի՞նչ էր նախատեսվում ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 3-ի «Կարսի կոնֆերանսի մասին» որոշումով.

- 1) Թույլատրել բանակցող կողմերին առաջ քաշել բոլոր հուզող խնդիրները, այդ թվում նաև հանրապետությունների միջև առկա տարաձայնությունները:
- 2) Հայաստանին թույլատրել բարձրացնել Ցեղասպանության հարցը և պահանջել փոխհատուցում:
- 3) Կոնֆերանսում բոլոր հարցերը քննարկել առանց նախապայմանների, առանց նախնական փոխհամաձայնության և պայմանավորվածությունների:
- 4) Խստորեն պահպանել Մոսկվայի պայմանագրի շրջանակները, «ոչ մի դեպքում թույլ չտալ Կովկասի հանրապետությունների մեկուսի ելույթները»:

31

Ո՞վ է ընտրվել Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովի նախագահ.

- 1) Հովսեփ Արղությանը
- 2) Սամսոն Հարությունյանը
- 3) Ստեփան Զորյանը
- 4) Սիմոն Զավարյանը

32

Ո՞ր փաստաթղթից են մեջբերված հետևյալ խոսքերը.

«Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան–բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»:

- 1) Հայոց ազգային խորհրդի՝ Հայաստանի անկախության մասին կոչից
- 2) «Հաշտության և հողի մասին» հրովարտակից
- 3) «Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի ակտ»–ից
- 4) «Թուրքահայաստանի մասին» հրովարտակից

33

Ո՞ւմ ստորագրած հրամանից են մեջբերված խոսքերը.

Իսկ ով «կրնդդիմանա այս սրբազան և հայրենասիրական գործին և չի կատարի իր վրա դրված պարտականությունները կամ որևէ եղանակով կփորձի պաշտպանել կամ թաքցնել այս կամ այն հային, կճանաչվի հայրենիքի ու կրոնի թշնամի և դրան համապատասխան կպատժվի»:

- 1) Նազրմի, Էնվերի, Ջեմալի
- 2) Շաքիրի, Շյուքրիի, Ջևդեթի
- 3) Թալեաթի, Էնվերի, Նազրմի
- 4) Ջեմալի, Շաքիրի, Ջևդեթի

34

Ի՞նչ էր կոչվում միջնադարյան Հայաստանի քաղաքների՝ արտաքին պարսպով շրջապատված հիմնական մասը՝ բուն քաղաքը.

- 1) արվարձան
- 2) ոստան
- 3) մայրաքաղաք
- 4) շահաստան

35

Ո՞րն էր Բագրատունյաց Հայաստանում կենտրոնացված պետության ստեղծման ջանքերի ձախողման գլխավոր պատճառը.

- 1) Հայոց եկեղեցու ղեկավարության դիրքորոշումը
- 2) երկրի՝ տնտեսական առումով հետամնաց լինելը
- 3) արտաքին գործոնները
- 4) հայ իշխանների անհնազանդությունը

36

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. ՀՀ Սահմանադրության փոփոխված տարբերակի ընդունումը
- բ. Երևանի արհեստական կաուչուկի գործարանի կառուցումը
- գ. Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը
- դ. «Անուշ» օպերայի բեմադրումը Ալեքսանդրապոլում
- ե. Օլեգ Եսայանի նշանակումը ԼՂՀ վարչապետ
- զ. Ա. Թամանյանի կողմից Երևանի գլխավոր հատակագծի կազմումը

- 1) գ, դ, գ, ա, բ, ե
- 2) դ, գ, բ, ե, գ, ա
- 3) գ, բ, դ, ա, ե, գ
- 4) դ, գ, բ, ա, ե, գ

37

Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վերջինը.

- ա) Թիգլաթպալասար III-ի փորձը՝ գրավելու Վանը
- բ) բարիդրացիական հարաբերությունների հաստատումը Վանի թագավորության և Ասորեստանի թագավոր Սինաքերիբի միջև
- գ) Վանի թագավորության միասնական դիցարանի ստեղծումը
- դ) կլիմերների առաջին թշնամական արշավանքները Վանի տերության դեմ
- ե) Վանի տիրակալի հիշատակվելը կլիմերների հետ Ասորեստանի դեմ թշնամական գործողություններ ծրագրելիս

- 1) ե
- 2) բ
- 3) դ
- 4) ա

38

Կատարել համապատասխանեցում.

- | | |
|---|--------------|
| ա. Կապադովկիա ներխուժած հռոմեական զորքի հրամանատարը | 1) Սելենե |
| բ. Անկախ Օռփքի վերջին արքան | 2) Սուլլա |
| գ. Տիգրան Մեծին հավատարմության երդում տված Մարաստանի թագավորը | 3) Գոդերձ II |
| դ. Տիգրան Մեծի կողմից մահապատժի ենթարկված Սելևկյան թագուհի | 4) Միհրդատ |
| | 5) Արտանես |

- 1) ա-5, բ-4, գ-3, դ-1
- 2) ա-2, բ- 5, գ-4, դ-1
- 3) ա-5, բ-4, գ-2, դ-1
- 4) ա-5, բ-4, գ-3, դ-2

Ընտրել տերմինների կամ հասկացությունների երկու ճիշտ բացատրությունները.

- 1) «Թուրքական ազգային ուխտ» փաստաթղթում ասվում էր, որ հայկական կազմակերպված համայնքի ստեղծման (Արևմտյան Հայաստանում) կանխումը պետք է լինի յուրաքանչյուր թուրքի սրբազան գործը, իսկ Հայաստանի ոչնչացումը առաջնահերթ խնդիրը:
- 2) Նեպոլ նախատեսված տնտեսական բարեփոխումների առանցքն էր պարեն-մասնատրման կիրառումը:
- 3) Ցարիզմի հրապարակած եկեղեցական կանոնադրությամբ Հայոց եկեղեցին չէր խառնվելու պետական գործերին, այլ զբաղվելու էր միայն դպրոցի, ծեսերի և այլ հարցերով:
- 4) Սուլթանական կառավարության հրապարակած թանգիմաթը արևմտահայության ներքին կյանքը կազմակերպող իրավական փաստաթուղթ էր:
- 5) Արևելյան Հայաստանի՝ որպես Օսմանյան կայսրությանը ենթակա տարածքի խնդիրն ուղղակիորեն դառնում է Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս և շուտով Հայկական հարց անունով հայտնվում միջազգային դիվանագիտության կիզակետում:

Գտնել սխալ պատասխանները:

Ինչու՞ 1918 թ. հնարավոր չեղավ պաշտպանել մեր հայրենիքի արևմտյան մասը.

- 1) Խորհրդային Ռուսաստանի բրեստյան պարտվողական քաղաքականության պատճառով
- 2) Անտանտի երկրների՝ ստանձնած պարտավորությունները չկատարելու պատճառով
- 3) Ռուսաստանը պարտավորվել էր հայկական տարածքները հանձնել Թուրքիային՝ վճարելիք ռազմատուգանքի փոխարեն
- 4) մենշևիկների և մուսավաթականների հակահայկական դաշինքի պատճառով
- 5) հայկական կանոնավոր զորամասերի համալրումը դեռ չէր ավարտվել, և նրանց զգալի մասն էլ թիկունքում էր

Ընտրել ճիշտ փաստարկները.

- 1) 61 թ. անցնելով Արածանի գետը՝ հռոմեական զորքը բանակ է դնում Հռանդեա (Եռանդ) վայրում:
- 2) 64 թ. Հայաստան է գալիս Կորբուլոնը և բանակցություններ վարում Վաղարշի ու Տրդատի հետ:
- 3) Տրդատ I-ի թագավորության վեցերորդ տարում Մեծ Հայքի խաղաղ կյանքն ընդհատվեց Կովկասից սարմատական ցեղերի ներխուժման հետևանքով:
- 4) Հայ-պարթևական զորքը, ջախջախելով Հայկական Պարի լեռնանցքներում տեղակայված հռոմեական կայազորները, Հռանդեա վայրում շրջապատում է Կորբուլոնի բանակը:
- 5) 65 թ. Տրդատը մեծ ջբախմբով՝ իր ընտանիքով և 3000 հեծյալներով, ուղևորվում է Հռոմ:

42 Ո՞ր իրադարձությունն է խախտել տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) Թամար Թագուհու գահակալության սկիզբը
- 2) Բասենի ու Բագրևանդի ազատագրումը Չաքարյանների կողմից
- 3) Ամբերդ ամրոցի ազատագրումը Չաքարյանների կողմից
- 4) Անիի վերջնական ազատագրումը Չաքարյանների կողմից
- 5) Դվինի ազատագրումը Չաքարյանների կողմից
- 6) Խլարթի պաշարումը Չաքարյանների կողմից

43 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) հայ-թաթարական արյունալի ընդհարումների ավարտը
- 2) Ս. Առաքելոց վանքի կռիվը
- 3) նշանավոր հայդուկ Հրայրի զոհվելը
- 4) Ռուսաստանյան առաջին հեղափոխության սկիզբը
- 5) Հայ առաքելական եկեղեցու ունեցվածքի բռնագրավման ծրագրի հաստատումը ռուսական կայսեր կողմից

--	--	--	--	--

44 Տարեթվերը համապատասխանեցնել Արցախյան ազատագրական պատերազմի հետ կապված իրադարձություններին.

- ա. հայկական ուժերի մուտքը Լաչին
բ. Քելբաջարի շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրումը
գ. Կրկժանի ազատագրումը
դ. Շուշիի ազատագրումը
ե. հայկական ուժերի հաղթանակը Ադդամի մոտ

- 1) 1994 թ. մայիսի 12
- 2) 1994 թ. փետրվարի 18
- 3) 1993 թ. հուլիսի 23
- 4) 1992 թ. մայիսի 18
- 5) 1992 թ. մայիսի 8–9
- 6) 1992 թ. հունվարի 19–20

ա	
բ	
գ	
դ	
ե	

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ պատասխաններից որևէ մեկը:

- 1) Միայն XVI դ. առաջին կեսին են զեյթունցիները պարտավորվել օսմանյան իշխանություններին վճարել տարեկան որոշակի հարկ՝ պահպանելով իրենց ներքին ինքնուրույնությունը:
- 2) Ջհանշահի կառավարման շրջանում Արցախի, Սյունիքի, Գուգարքի, Վայոց ձորի, Գեղամա երկրի և այլ վայրերի հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը և սկսեցին կոչվել մելիքներ:
- 3) Մելիքությունները ժառանգական էին. մահացած մելիքին փոխարինում էր ավագ որդին, որին հաստատում էր շահը:
- 4) Միքայել Մեբաստացի կաթողիկոսի կողմից Վենետիկ ուղարկված մահտեսի Շահմուրատի գլխավորած պատվիրակության նպատակն էր ստանալ եվրոպական տերությունների օգնությունը՝ թուրքական տիրապետությունից ազատագրվելու նպատակով:
- 5) Օսմանյան թուրքերի կողմից Կ.Պոլիսը գրավելուց ութ տարի անց այդտեղ հիմնադրվել է հայոց պատրիարքությունը:
- 6) Բռնագաղթի միջոցով հայ վաճառականներին բնակեցնելով Պարսկաստանի արևելյան նահանգներում՝ շահ Աբասը խթանեց իր երկրի տնտեսության զարգացումը:

Բ մակարդակ

46

Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.

- ա. Հայկազուն–Երվանդունիների գահակալության սկզբնական ժամանակաշրջանում Հայոց արքան հայտնի էր «տիեզերքի թագավոր» տիտղոսով:
- բ. Հելլենիզմի դարաշրջանում Հայաստանում տարածված կրոնը միաստվածային էր:
- գ. Հայրենիքի սահմանների պաշտպանությունը կազմակերպելու համար Արտաշես I–ի ստեղծած չորս միավորները կոչվում էին գորավարություններ:
- դ. Արտաշատը, Տիգրանակերտը և Անտիոքը միմյանց կապող ճանապարհը կոչվում էր «Արքունի պողոտա»:
- ե. Արգիշտի I–ն իր տերությանն է միացրել Էթիունյան միության մաս կազմող Վեդուրի–Էթիունի կամ այլ կերպ՝ Ջրային Էթիունի երկրամասը:
- զ. Հույներն ու հռոմեացիները Տիգրան Մեծին բնորոշել են որպես «կենցաղավարության մեջ զուսպ, նաև չափավոր ու ողջամիտ, ինչպես լավագույնները՝ հույների և հռոմայեցիների մեջ»:
- է. Արգիշտի I–ը իր տերությանն է միացրել նաև Աբիլիանի երկիրը, որը հետագայի Ապահունիք գավառն է:

- 1) գ, դ, է
- 2) բ, գ, է
- 3) ա, դ, է
- 4) բ, է, գ

47

Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.

- ա. Հ. Քաջազնունու կառավարությանը փոխարինածը հայտնի է «բյուրո–կառավարություն» անունով:
- բ. Այն կազմակերպությունը, որին պաշտոնական եկեղեցու դեմ պայքարում օգտագործում էին խորհրդային իշխանությունները, կոչվում էր «Ազատ եկեղեցական եղբայրություն» կամ «Նոր եկեղեցի»:
- գ. Քարվաճառի ազատագրման գործողությունը ստացավ «Հարսանիք լեռներում» անվանումը:
- դ. Հայ–ռուսական երևանյան բանակցությունների ավարտին նախաստորագրված փաստաթուղթը կոչվում էր «Եզրափակիչ որոշման արձանագրություն»:
- ե. ՀՀ Սահմանադրության նախագծի մշակման նպատակով 1990 թ. նոյեմբերի 15–ին ստեղծված մարմինը ՀՀ Ազգային ժողովի սահմանադրական հանձնաժողովն էր:
- զ. Հայաստանի կոմունիստական կուսակցության շարքերում գոյություն ունեցող տրոցկիստական երկու խմբերն իրենց անվանում էին «Ուղղափառ մարքսիստներ» և «Տրոցկիստական միություն»:
- է. Միջազգային պայմանագրերի չեղյալ հայտարարելը կոչվում է դենոնսացիա:

- 1) բ, դ, է
- 2) գ, է, գ
- 3) ա, գ, է
- 4) բ, դ, է

Թվարկվածներից որո՞նք են արտացոլում 1826–1828 թթ. ռուս–պարսկական պատերազմի անմիջական հետևանքները.

- ա. Արևելյան Հայաստանի ևս մի մեծ հատված՝ Երևանի և Նախիջևանի խանությունները, անցան Ռուսաստանին:
- բ. Ռուսական իշխանություններն արագորեն բնակեցրին Արևելյան Հայաստանը ռուս կազակներով:
- գ. Ռուսաստանը Պարսկաստանին վերադարձրեց Արաքսից հարավ ընկած պատմական Պարսկահայքի և Ատրպատականի տարածքները:
- դ. Պատերազմի արդյունքները գոհունակությամբ չընդունվեցին արևմտահայերի կողմից:
- ե. Պարսկական տիրապետությունից ազատագրվելու արևելահայության հույսերը չարդարացան:
- զ. Տասնյակ հազարավոր հայեր, չկամենալով մնալ մահմեդական տիրապետության տակ, 1828 թ. զարնանից սկսեցին վերաբնակվել Ռուսաստանյան կայսրությանն անցած տարածքներում:
- է. Պատերազմի ավարտից հետո Արևմտյան և Արևելյան Հայաստանները վերամիավորվեցին:

- 1) գ, զ, է
- 2) ա, գ, զ
- 3) ա, ե, դ
- 4) բ, ե, է

Գտնել այն պատճառները, որոնք հիմք դարձան հայ իշխանների դժգոհության և Անտիոքի իշխանի որդի Ֆիլիպի ձերբակալության համար.

- ա. Ֆիլիպը սկսեց արհամարհել հայոց ծիսակարգը և հովանավորել խաչակիրներին:
- բ. Ֆիլիպը սերտ կապեր հաստատեց հայ եկեղեցական վերնախավի հետ և փորձում էր նրան դուրս բերել հայ իշխանների դեմ:
- գ. Ֆիլիպը պարտադրում էր հայերին կատարել եկեղեցիների միավորման վերաբերյալ տված խոստումները:
- դ. Ֆիլիպը արքունիքից հեռացնում էր հայ իշխաններին և պաշտոնները հանձնում խաչակիրներին:
- ե. Հայ իշխանները ապստամբություն էին բարձրացրել Ֆիլիպի դեմ, որը դաժանորեն ճնշվել էր:
- զ. Ֆիլիպը սկսեց կողոպտել արքունի գանձերը և դրանք ուղարկել Անտիոք:
- է. Խաչակիր ասպետները դավադրաբար սպանեցին Կոստանդին Գունդստարլին:

- 1) ա, դ, զ
- 2) գ, ե, զ
- 3) բ, գ, դ
- 4) ա, դ, է

50

VI դարի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- ա. Վահրամ Չուբինի ապստամբությունը
- բ. Վարդ Պատրիկի՝ հայոց մարզպան դառնալը
- գ. Հուստինիանոսի դեմ խռովության կազմակերպումը
- դ. Մանվել Մամիկոնյանի սպանությունը
- ե. Հայաստանի երկրորդ բաժանումը
- զ. Հովհաննես Արշակունու գլխավորած ապստամբությունը
- է. Դվինի II եկեղեցական ժողովի գումարումը

- 1) ա, ե, գ, բ, է, դ, զ
- 2) բ, գ, զ, է, դ, ա, է
- 3) գ, է, դ, ա, է, գ, բ
- 4) գ, գ, է, դ, ա, է, բ

51

Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Հռոմի դրածո Արտավազդ III-ի վտարումը Հայաստանից
- բ. Արտավազդ II-ի եղերական մահը
- գ. հռոմեա-պոնտական պատերազմների սկիզբը
- դ. Առաջին եռապետության կազմավորումը Հռոմում
- ե. Արտաշես II-ի դավադիր սպանությունը
- զ. Խառանի ճակատամարտը
- է. թագաժառանգ Բակուրի հրամանատարությամբ հռոմեացիների վտարումը Ասորիքից, Կիլիկիայից, Փյունիկիայից, Պաղեստինից և Հրեաստանից
- ը. հռոմեա-պոնտական պատերազմների ավարտը
- թ. Կրասոսի պարթևական արշավանքի սկիզբը
- ժ. Միհրդատ Եվպատորի մահը

- 1) դ
- 2) թ
- 3) գ
- 4) է

52

Գտնել այն իրադարձությունը, որ տեղի է ունեցել վերջինը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.

- ա. Հայ ժողովրդական կուսակցության երկրորդ համագումարը
- բ. Հայաստանի խորհրդի անդրանիկ նիստը
- գ. Հայաստանի Հանրապետության վարչական բաժանումը 4 նահանգների
- դ. «Լոռու չեզոք գոտի» ժամանակավորապես վրացական զորք մտցնելու մասին համաձայնագրի ստորագրումը
- ե. Հայոց ազգային խորհրդի կողմից Հ. Քաջազնունու ընտրվելը վարչապետ
- զ. Արցախահայության 9-րդ համագումարը
- է. Սևրի պայմանագրի ստորագրումը
- ը. Անկարայում ֆրանս-թուրքական պայմանագրի ստորագրումը

- 1) է
- 2) դ
- 3) գ
- 4) ը

53

Զորամիավորումների անունները համապատասխանեցնել հրամանատարների անուններին.

- 1) Հայկական կորպուս
- 2) Առանձին հայկական կորպուսի Երևանյան գորախումբ
- 3) Հատուկ հավաքական ջոկատ
- 4) Սարդարապատի ջոկատ
- 5) Կովկասյան ռազմաճակատ
- 6) Ղարաքիլիսայի ճակատամարտում հայկական առաջին դիվիզիա

- ա. Դանիել Բեկ-Փիրումյան
- բ. Անդրանիկ
- գ. Ա. Չխենկելի

- դ. Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյան
- ե. Մովսես Սիլիկյան
- զ. Թովմաս Նազարբեկյան
- է. գեներալ Պրժնալսկի

- 1) 1-գ, 2-է, 3-բ, 4-ա, 5-է, 6-դ
- 2) 1-է, 2-գ, 3-զ, 4-ա, 5-է, 6-դ
- 3) 1-գ, 2-է, 3-դ, 4-ա, 5-զ, 6-բ
- 4) 1-գ, 2-ա, 3-է, 4-դ, 5-բ, 6-զ

Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

- ա. Խորհրդային իշխանությունը Փարիզի և Լոնդոնի պայմանագրերով, ըստ էության, հրաժարվեց Հայկական հարցից, և համազգային այդ խնդրի ամբողջ ծանրությունն իր վրա վերցրեց Սփյուռքը:
- բ. 1920–ական թթ. սկզբին Հայկական հարցի համար դիվանագիտական պայքարը շարունակում էին Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի, ապա՝ Լ. Շանթի գլխավորությամբ, և տակավին իր գոյությունը շարունակող նախկին Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ավ. Ահարոնյանի նախագահությամբ:
- գ. Խորհրդային իշխանության տարիներին Հայ դատի և պահանջատիրության խնդիրներով հիմնականում զբաղվում էր Սփյուռքը, որովհետև Խորհրդային Հայաստանը զրկված էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից:
- դ. Սփյուռքում հայապահպանության և Հայ դատի լուծման գործում զգալի դեր էին խաղում հայ ազգային քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԴ–ն, Արմենական կուսակցությունը և Ազգային միացյալ կուսակցությունը:
- ե. Հայկական ազգային կոմիտեի կամ Հայ դատի հանձնախմբի նպատակն է Արևելյան և Արևմտյան Հայաստանի միավորումը և միասնական հայկական պետության կազմումը միայն Վիլսոնի նախանշած սահմաններում:
- զ. Սևրի պայմանագիրը ստորագրած երկրները Լոնդոնի կոնֆերանսում հրաժարվեցին իրենց ստորագրություններից և փաստորեն վերանայեցին իրենց մոտեցումները Հայկական հարցի լուծման վերաբերյալ:
- է. Սփյուռքի հետ հարաբերությունները մասնակիորեն վերականգնվեցին միայն Հայրենական մեծ պատերազմի տարիներին՝ հակաֆաշիստական ընդհանուր ճակատի ստեղծման ընթացքում:

- 1) ա, դ, է
- 2) դ, է, գ
- 3) գ, գ, է
- 4) բ, գ, է

Բերված փաստարկներից որո՞նք են տեղ գտել Մովսես Սարաֆյանի կողմից ներկայացված Հայաստանի ազատագրության ծրագրում.

- ա. Ռուսաստանում բնակվող հայերից ու վրացիներից կազմված կամավորական ջոկատները, որոնց հրամանատարը պետք է լիներ հայազգի և ենթարկվեր ռուսական բանակի հրամանատարությանը, ռուսական զորքերի հետ ուղարկվելու էին Վրաստան:
- բ. Հերակլ II-ը պետք է Վրաստանում կատարեր երկիրը հզորացնող բարեփոխումներ, որպեսզի օգնություն ցուցաբերեր հայ ժողովրդի ազատագրական պայքարին:
- գ. Հերակլ II-ը պետք է օժանդակեր ռուսական զորքին՝ գրավելու Երևանի խանությունը՝ զինվորներ ուղարկելով և գահընկեց անելով իրենից կախման մեջ գտնվող Երևանի խանին:
- դ. Հակաթուրքական պայքարի մեջ պետք է ընդգրկվեին Արցախի մելիքները՝ նրանց տրամադրելով զենք և ռազմական հանդերձանք:
- ե. Ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ պառլամենտական կառուցվածքով:
- զ. Թուրքիայի դեմ արշավանքը պետք է կատարվեր Երևան–Ախալցխա–Կարս և Թիֆլիս–Բայազետ–Վան ուղղություններով:
- է. Հայաստանի թագավոր պետք է հռչակվեր Ղարաղաղի մելիքներից մեկը:

- 1) բ, գ, է
- 2) բ, դ, ե
- 3) ա, գ, է
- 4) ա, գ, դ

1920 թ. սեպտեմբերի 18–ին Բաքվում ընդունված Բանաձև–փաստաթուղթը վտանգավոր էր Հայաստանի համար, որովհետև՝

- ա. նրա հիմնական դրույթներն ամբողջությամբ ուղղված էին Հայաստանի Հանրապետության դեմ:
- բ. դրանով առաջարկվում էր հնարավոր բոլոր միջոցառումներով օգնել Հայաստանին խուսափելու խորհրդայնացումից:
- գ. ենթադրվում էր բոլոր միջոցներով օգնել Անտանտին:
- դ. առաջարկվում էր քեմալականների ռազմարշավի միջոցով նպաստել Հայաստանի խորհրդայնացմանը:
- ե. Ռուսաստանից պահանջվում էր չմիջամտել Հայաստանի ներքին գործերին:
- զ. նախատեսում էր «թուրք–հայկական կոտորածները» կանխելու պատրվակով որպես փրկարար և հաշտարար ռուսական զորքերը մտցնել Հայաստան և հաստատել խորհրդային վարչակարգ:
- է. նախատեսում էր ադրբեջանական զորքը Հայաստան մտցնելով՝ կանխել «թուրք–հայկական կոտորածները»:

- 1) բ, ե, է
- 2) ա, գ, դ
- 3) ե, գ, է
- 4) ա, դ, գ

Կատարել համապատասխանեցում.

Պաշտոն

- 1) Փարիզի խորհրդածողովում ՀՀ պատվիրակության ղեկավար
- 2) III կամավորական ջոկատի հրամանատար
- 3) Շապին-Գարահիսարի Զինվորական խորհրդի ղեկավար
- 4) Արևմտահայ Ազգային խորհրդի նախագահ
- 5) Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսար
- 6) Հայաստանի առաջին կառավարության արտաքին գործերի նախարար
- 7) Հաճընի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար

Գործիչ

- | | |
|-----------------------|------------------------|
| ա. Ալեքսանդր Խատիայան | ե. Ավետիս Ահարոնյան |
| բ. Ստեփան Շահումյան | զ. Համազասպ |
| գ. Սարգիս Ճեպեճյան | է. Ղուկաս Տեովլեթյան |
| դ. Վահան Փափազյան | ը. Հովհաննես Քաջազունի |

- 1) 1-ե, 2-զ, 3-դ, 4-ա, 5-զ, 6-ը, 7-է
- 2) 1-բ, 2-զ, 3-զ, 4-ա, 5-դ, 6-ը, 7-է
- 3) 1-ե, 2-զ, 3-է, 4-դ, 5-բ, 6-ա, 7-զ
- 4) 1-ա, 2-է, 3-զ, 4-ե, 5-բ, 6-դ, 7-զ

Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.

- ա. Հայ ժողովուրդը VIII–IX դարերում բազմիցս ապստամբել է օտար լծի դեմ:
- բ. Հայ նախարարական համակարգը, չնայած խալիֆայության դաժան բռնություններին, պահպանել էր իր բաղադրատարրերը, որոնց հողատիրական հիմքը կազմում էին Բագրատունյաց, Սյունյաց, Մամիկոնյան և Արծրունիների իշխանական տիրույթները:
- գ. Հայ եկեղեցին արաբական տիրապետության շրջանում շարունակում էր իր ազգապահպան գործունեությունը:
- դ. Արմինիայի առաջին արաբ ոստիկանի դաժան հարկահանությանը և կրոնական հալածանքներին հայերը պատասխանեցին ապստամբությամբ, որը գլխավորեց Աշոտ իշխանի որդին՝ Գագիկ Բագրատունին:
- ե. ՄԺԺԺ Գնունին մինչև VII դարի 40–ական թթ. վերջը գլխավորում էր Հայաստանի վերամիավորման գործը:
- զ. Սասուն–Խուրթ գավառում տեղի ունեցած հուժկու ապստամբությունը ղեկավարում էր Աշոտ Սասկերը:
- է. Կարինը պաշարող ապստամբները, տեղեկանալով Արճեշի ճակատամարտի տխուր վախճանի մասին, Մուշեղի գլխավորությամբ շարժվեցին դեպի Բագրևանդ գավառ:

- 1) ա, բ, դ
- 2) դ, ե, գ
- 3) գ, զ, է
- 4) դ, ե, է

Գտնել սխալ պնդումները.

- ա. Ջենոն–Արտաշեսը, թեև մեծացել ու դաստիարակվել էր հայերի մեջ և յուրացրել էր հայոց լեզուն ու սովորույթները, սակայն չէր վարում Հայաստանի պետական շահերից բխող քաղաքականություն:
- բ. Միհրդատ Իբերացու գահակալումը Հայաստանում նշանավորվեց սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորած հակահռոմեական հուժկու ապստամբությամբ, որի հետևանքով Հայաստանը մինչև 34 թ. լիովին վերականգնեց իր անկախությունը:
- գ. Հայոց գահին ամրանալու Հռադամիզդի ջանքերը դատապարտված էին անհաջողության, որովհետև նա իր հանցավոր գործողություններով աստվի էր հայ ժողովրդին:
- դ. Կապադովկիայի հռոմեական կուսակալը, Հռադամիզդից կաշառվելով, նրան ապօրինաբար թագադրում է մայրաքաղաք Արտաշատում:
- ե. 54 թ. ցրտաշունչ ձմռանը Հռադամիզդը վերադարձավ Արտաշատ և որոշեց հաշվեհարդար տեսնել հայ բնակչության հետ, սակայն զինված ժողովուրդը շրջապատեց պալատը, իսկ Հռադամիզդը կնոջ հետ փախուստի դիմեց:
- զ. Հայերը ցանկանում էին ազատվել Հռադամիզդից ու հռոմեական միջամտությունից, ուստի ընտրեցին Պարթևստանի առաջարկությունը, քանզի պարթևները չէին սպառնում հայոց պետականության գոյությանը և կենցաղով, բարքերով ու սովորույթներով մոտ էին հայերին:
- է. Խայտառակ ձևով պարտված Պետոսը սուտ լուր է ուղարկում Հռոմ, թե իբր Արևելքում իրավիճակը չի փոխվել, սակայն Ներոնը տեղեկացել էր, որ պարտված հռոմեական լեգեոնները հեռացել էին Հայաստանից:

- 1) ա, բ, է
- 2) բ, դ, ե
- 3) ա, բ, է
- 4) գ, զ, է

Ընտրել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.

- 1) Կիլիկյան Հայաստանի հյուսիսարևելյան մասը կոչվում էր Քարուտ Կիլիկիա:
- 2) Հայաստանի հարավում Խլաթ կենտրոնով մահմեդական իշխանությունը կոչվում էր Շահ–Արմենների ամիրայություն:
- 3) Վրացական արքունիքում թագաժառանգի խնամակալի պաշտոնը կոչվում էր աթաբեկ:
- 4) Պատմական Ուտիքում ձևավորված մահմեդական իշխանություններից էր Գանձակի ամիրայությունը:
- 5) Անիի Բագրատունյաց թագավորության կործանումից հետո Գագիկ Աբասյանին անցած տիտղոսը «արքայից արքա»–ն էր:
- 6) Վաչագան Բարեպաշտ արքան ստեղծել է «Սահմանադրութիւն կանոնական» կոչվող կանոնադրությունը:
- 7) Մոնղոլական բանակի զորաջոկատների հրամանատարները կոչվում էին նոյոն:

61

Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են սխալ.

- 1) Երվանդ II–ի՝ Բ. ա. 360–ական թթ. սկսված ապստամբությունը ավարտվեց պարտությամբ:
- 2) Վանի թագավորության և Ասորեստանի միջև Բ. ա. 716 թ. Մանայի համար սկսված պատերազմը ավարտվեց Ասորեստանի պարտությամբ:
- 3) Կյուրոս Մեծի դեմ սկսված ապստամբությունների արդյունքում Աքեմենյան տերությունը բաժանվեց 20 սատրապությունների:
- 4) Ալեքսանդր Մակեդոնացու տերության ժառանգման համար պայքարն ավարտվեց տերության տրոհմամբ:
- 5) Տիգրանակերտի ճակատամարտում հայկական ուժերի նահանջը նպաստեց Տիգրանակերտի գրավմանը հռոմեացիների կողմից:
- 6) Հայ–մարական համագործակցության արդյունքում կործանվեց Աքեմենյան տերությունը:
- 7) Արածանիի ճակատամարտում հռոմեացիների պարտությունը նպաստեց հայկական դիրքերի ամրապնդմանը Կորդուքում ու Հյուսիսային Միջագետքում:
- 8) Արտաշատի պայմանագրի համաձայն՝ Հայաստանը պահպանեց իր նվաճումները Հյուսիսային Միջագետքում:

62

Գտնել ճիշտ պատճառները.

Բոլշևիկների 1920 թ. Մայիսյան ապստամբությունը պարտվեց, որովհետև՝

- 1) բոլշևիկները հույսը դրել էին միայն իրենց ուժերի վրա
- 2) Խորհրդային Ռուսաստանը չաջակցեց
- 3) լուրջ նախադրյալներ չկային
- 4) ընթանում էր թուրք–հայկական պատերազմը, և բնակչությունը չպաշտպանեց նրանց
- 5) Վրաստանը չտրամադրեց խոստացված օգնությունը
- 6) ապստամբությունը միաժամանակ չսկսվեց տարբեր վայրերում
- 7) Ադրբեջանը խորհրդայնացվել էր

Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.

- 1) Սկրտիչ Խրիմյանի 1879 թ. պատրիարք դառնալուց հետո Ազգային սահմանադրությունը գործարկվեց Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում:
- 2) 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի Կովկասյան ճակատում՝ Ալեքսանդրապոլ–Կարս ուղղությամբ, հիմնական հարվածող ուժը գեներալ Միխայիլ Լոռիս–Մելիքովի հրամանատարությամբ գործող 52–հազարանոց Կովկասյան կորպուսն էր:
- 3) XIX դարի կեսերին Ջեյթունն անվանապես էր ենթարկվում Հալեպի փաշայությանը, սակայն միայն իշխանություններին տարեկան որոշ քանակությամբ հարկ էր վճարում:
- 4) 1860 թ. մայիսի 24–ին սուլթանի կողմից վավերացվեց արևմտահայերի Ազգային սահմանադրությունը:
- 5) 1860 թ. չերքեզների ավազակային ջոկատների ուղեկցությամբ թուրքական 20–հազարանոց բանակն արշավել է Ջեյթունի վրա և ջախջախիչ պարտություն կրել:
- 6) 1862 թ. Ազիզ փաշայի կազմակերպած գրոհը Ջեյթունի վրա ավարտվել է նրանով, որ թուրքերը, կորցնելով ավելի քան 2000 մարդ և իրենց ունեցած հրանոթները, փախուստի են դիմել:
- 7) 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմում Մ.Լոռիս–Մելիքովի և Ա. Տեր–Ղուկասովի կողքին մարտնչում էին նաև հայազգի գեներալներ Հովհաննես Լազարևը, Բեհբուժ Շելկովնիկովը, Հակոբ Ալիսագովը, Լևոն Մելիքովը, Ստեփան Քիշմիշևը և տարաստիճան բազմաթիվ զինվորականներ:

Տրված փաստարկներից որո՞նք են ճիշտ.

- 1) Շուշիում 1918 թ. հուլիսի 22–26–ին տեղի ունեցած արցախահայության առաջին համագումարը երկրամասը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր՝ «Լեռնահայաստան» անունով:
- 2) Թիֆլիսում 1919 թ. փետրվարի 6–13–ը տեղի է ունեցել Արևմտահայերի երկրորդ համագումարը:
- 3) Արցախահայության 1920 թ. ապրիլի 25–ին կայացած 9–րդ համագումարը երկրամասը հռչակեց Հայաստանի Հանրապետության անբաժանելի մասը:
- 4) 1920 թ. նոյեմբերի 7–ին՝ Կարսի անկման օրը, Հայաստանի կառավարությունը ստիպված ընդունեց թուրքական կառավարության կողմից ներկայացված զինադադարի պայմանները:
- 5) 1920 թ. ամռան կեսերից Մոսկվայում ընթացած խորհրդա–քեմալական բանակցություններն ավարտվեցին օգոստոսի 24–ին կողմերի միջև նախաստորագրված «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրով:
- 6) ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը 1989 թ. նոյեմբերի 28–ին բեկանեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ԼՂ Ազգային խորհրդի «Հայկական ԽՍՀ–ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշումը:
- 7) 1991 թ. մայիսի 20–ին տեղի ունեցած ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններում ընտրողների ձայները համարյա հավասարապես բաժանվեցին Հայկոմկուսի և ՀՀՇ–ի թեկնածուների միջև:
- 8) 1947 թ. ապրիլի 30–ից մայիսի 4–ը Նյու Յորքում կայացել է Հայկական համաշխարհային կոնգրեսը:

65

Թվարկվածներից որո՞նք են խախտում 1918 թ. թուրք-հայկական պատերազմի դեպքերի տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.

- 1) թուրքական զորքերի կողմից Սարիղամիշի գրավումը
- 2) Կարսի՝ առանց դիմադրության թուրքերին հանձնվելը
- 3) Ալեքսանդրապոլի գրավումը թուրքերի կողմից
- 4) Սասունցի Մանուկի և Մուշեղի գլխավորությամբ Ներքին Թալինի գրավումը
- 5) թուրքական զորքերի ներխուժումը Ջավախք հարավ-արևմուտքից
- 6) հայկական զորքերի կողմից Սարդարապատի հետզրավումը
- 7) Բաշ Ապարանի ճակատում հայկական ուժերի վերջնական հաղթանակը
- 8) Ղարաքիլիսայի հերոսամարտի ավարտը
- 9) Շիրակում՝ Սոգյությունի (Մառնադբյուր) ճակատում, հայկական ուժերի հաղթական կռիվների ավարտը

66

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Գանձասարի վանքի դառնալը Ադվանից եկեղեցու կաթողիկոսանիստ կենտրոն
- 2) Բերդուսի ճակատամարտը
- 3) Գրիգոր Զ Այիրատի բազմելը հայոց կաթողիկոսական աթոռին
- 4) Խաչենի տիրակալ Հասան-Ջալալին և Ջաքարե Ջաքարյանին մահապատժի ենթարկելը
- 5) Սարգիս Ջաքարյանի՝ ամիրսպասալարի պաշտոն ստանալը
- 6) հայոց կաթողիկոս Կոստանդին Լամբրոնացու մեկնումը Կահիրե հաշտության պայմանագիր կնքելու համար

--	--	--	--	--	--

67

Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

- 1) Կապանում և Սիսիանում Պողոս Տեր-Դավթյանի գլխավորությամբ հակախորհրդային նոր ապստամբությունները
- 2) Ֆրանսիական իշխանությունների կողմից Հայկական լեգեոնի լուծարումը
- 3) «Ղարաբաղի ժողովրդական կառավարության» կազմումը
- 4) Հայ-վրացական կարճատև պատերազմի սկիզբը
- 5) թուրքական զորքերի՝ դեպի Բաքու ռազմարշավի սկսվելը
- 6) Գ. Նժդեհի ուժերի հաղթանակը Նուրի փաշայի զորքերի նկատմամբ Որոտանի կիրճում

--	--	--	--	--	--

Արտաշեսյան արքայատոհմի արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.

- ա. Հոր մահապատժից հետո նա կարգադրեց սրի քաշել Հայաստանում գտնվող բոլոր հռոմեացիներին:
- բ. Նա զոհվեց նախակովկասյան տափաստաններից Հայաստան ներխուժած սարմատական քոչվոր ցեղերի դեմ մղված ճակատամարտում:
- գ. Նա թագադրվեց Աղձնիքի նշանավոր սրբավայրերից մեկում, որտեղ հետագայում կառուցեց մայրաքաղաք:
- դ. Պարթևստանի դեմ պայքարում նա պահպանեց Հայաստանի անկախությունը, բայց իր եղբորորդուն ստիպված պատանդ տվեց պարթևներին:
- ե. Բանակցությունների ժամանակ նա դավադրաբար ձերբակալվեց Անտոնիոսի կողմից և շղթայակապ ուղարկվեց Ալեքսանդրիա:
- զ. Երկրի կառավարումը դյուրացնելու նպատակով նա այն բաժանեց 120 գավառների:

- 1) Տիգրան II
- 2) Տիգրան III
- 3) Տիգրան IV
- 4) Արտաշես II
- 5) Արտաշես I
- 6) Արտավազդ II
- 7) Արտավազդ I

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

Փաստերը համապատասխանեցնել աղբյուրներից մեջբերված խոսքերին.

- ա. «Հայոց նախարարներին անցավ թագավորությունը, որովհետև թեպետև հարկը պարսից արքունիքն էր գնում, սակայն հայոց այրուձին ամբողջապես նախարարներն էին առաջնորդում պատերազմի ժամանակ»:
- բ. «Մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու, բայց չենք մեռնի, մինչև չոչնչացնենք մեր թշնամիներին»:
- գ. «Լավ ենք համարում մի անգամ մեռնել, քան թե ամեն օր եկեղեցու և քրիստոնեության արհամարհանքը և քակտումը տեսնել»:
- դ. «Քաջությամբ մեռնենք մեր աշխարհի և մեր ազգի համար»:
- ե. «Հայոց տան տերն ու թագավորը ես եմ, և ես քեզ չեմ տալիս հայոց երկիրը, որովհետև դու ինձ խաբեությամբ ես բերել Կոստանդնուպոլիս»:
- զ. «Քավ լիցի՝ իմ մոլորված ոչխարը մատնեմ գայլերին»:

- 1) Վարդանակերտի ճակատամարտը
- 2) Արշակունյաց թագավորության անկումը
- 3) Արձնիի ճակատամարտը
- 4) Գազիկ II-ի պատասխանը Մոնոմախ կայսրին
- 5) Վահրամ Պահլավունուն ուղղված անեցիների դիմումը
- 6) 481 թ. Շիրակում հավաքված հայ նախարարների վճիռը
- 7) Սահակ Պարթևի խոսքերը Արտաշեսի գահընկեցությանը դեմ լինելու առիթով

ա	
բ	
գ	
դ	
ե	
զ	

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել՝ ճիշտ է, Միսալ է, Չգիտեմ պատասխաններից որևէ մեկը:

- 1) Մադաքիա Օրմանյանը գալիք սերունդներին ավանդել է զգուշանալ եվրոպական տերությունների քաղաքականությունից, որովհետև նրանց համար գլխավորը «շահն ու օգուտն է»:
- 2) Հնուտ հայագետներ Հ. Հյուբշմանը և Ա. Մեյեն ճշտել են հայերենի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում՝ որպես նրա առանձին ճյուղ:
- 3) Ժամանակի քննությանն են դիմացել ականավոր պատմաբան Մկրտիչ Էմինի այն մտքերը, թե մեծ տերությունների համար Հայկական հարցը սոսկ միջոց էր Օսմանյան կայսրության գլխին մտրակ ճոճելու:
- 4) Հայտնի նկարիչ Ստեփանոս Ներսիսյանը Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում սովորել է Աղաթոն Հովնաթանյանի հետ:
- 5) Ղևոնդ Ալիշանը հետևել է ժամանակին մեծ համարում ստացած այն հայեցակետին, ըստ որի՝ մարդկային հասարակության զարգացման հիմնական գործոնը աշխարհագրական դիրքն է:
- 6) XIX դ. վերջին հայ գեղանկարչության մեջ մինչ այդ բացառիկ նշանակություն ունեցող բնանկարի ժանրն իր տեղը զիջել է դիմանկարին: